

Ո. Մ Ն Ն Պ Ի Ն

Մեծ գաղափարը ծնւռում է նորից՝
Սուրբ ճշմարտութեան առաքեալն անմեռ,
Ողջադուրանքով, հեռու ափերից.
Հնչում կենսուրախ օրհնանք ու երգեր։

Վեհ յաղթանակի, Մեծ տօնն է այսօր,
Եւ արդարութեան, և՛ եղբայրութեան.
Բայց յորդ արիւնից երկինքն է բոսոր
Զարով ծաւալուած աշխարհի վերան։

Զանգը երկնակախ հուժկու զօղանջով,
Աւետիք տալով կանչում է ուխտի,
Վաստակաւորներ գալիս շտապով,
Ենունդն է այսօր Մեծ Մարդարէի։

Երնէկ նրա հետ մեր հորիզոնից
Ամպով պարուրուած մի արև ծագի,
Մշուշը ցրէ խաւար սրտերից,
Սէրը երկնառաք միշտ յաղթանակի։

Եւ նրա շնչով ապրի անթառամ,
Այն ինչ որ սուրբ է, վեր երկրայինից՝
Աննըկուն հաւատ, սիրել ընկածին—
Ով շատ է տանջուել միշտ անկարեկից։

Մեղսոտ աշխարհին երկինքը ժըպտայ,
Մի նոր հաշտութեան ծիածան կապի.
Եւ եղբայրութեան ողջոյնը թընդայ
Ազգի սրտերում, կեանքը ոէր ըմպի։

Գառնիկ.

Ճեմարան. 1908 թ. 6 յունուարի.

